# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐ. «ԱՅՆ, ՈՐ ՀԱՅԱՏԱՌ «ՎՐԱՍՏԱՆՆ» ԱՅԴ ԱՆՈՒՆՆ Է ԿՐՈՒՄ, ԱՐԴԵՆ ԻՍԿ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մայրս վրացուհի, հայրս՝ հայ, ապրել ու ստեղծել էին ամեն մեկն իր ազգայինին հատուկ վարք ու բարքով ընտանիք: Ես վրացախոս էի, քանի որ դպրոցս, միջավայրս վրացական էին: Հայերեն սովորելու նպատակով, հատուկ ընդունվեցի Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժին, որպեսզի խոսեմ, կարդամ ու գրեմ իմ մայրենիով: Հետագայում, վրացերենի ու հայերենի կատարյալ իմացությունն իմ մեջ պայմանավորեցին թարգմանչական գործունեությունս, որ սկսեցի այդ տարիներին գործող գեղարվեստական թարգմանության ու գրական կապերի գլխավոր խմբագրական կոլեգիայում: Վրացական ու կովկասյան այլ լեզուներով պարբերականներին զուգահեռ, մենք պարտադիր «Սովետական Վրաստան» էինք ստանում: Նրա անհագ ընթերցողն էի, նաեւ թարգմանիչը՝ բոլոր ցանկացողների համար: Անկեղծ ուրախանում էի, որ հայատառ պարբերականը Վրաստանի անունն է կրում: Սա խորհրդանշական էր ինձ համար, ու միշտ գիտակցում էի, թե որքան պատասխանատու՝ այն լույսընծայողների համար: Որովհետեւ Հայաստանից դուրս հայկական որեւէ կառույց ներկայացնելը մեծ պատասխանատվություն է, քանի որ դու պայմանավորում ես ոչ միայն նրա ներկան, այլեւ՝ ապագան: Ես դա զգացել եմ հատկապես՝ ղեկավարելով Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը: Ինչ խոսք, մեր սիրելի «Վրաստանը» հաշտարար էր ու շարունակում է այդպիսին մնալ շնորհիվ իր խմբագրի: Ինձ առանձին մտերմություն է կապում Վան Բայբուրթյանի հետ: Վանը՝ որպես քաղաքական, համայնքային, հասարակական գործիչ ու լրագրող, մշտապես գործել է հանուն հայ-վրացական կապերի բարի շարունակության եւ այդ առաքելությունը զգալի ու շոշափելի դարձրել նաեւ իր խմբագրած «Վրաստանում»: Իսկ ես կարծում եմ, որ սա ամենաանհրաժեշտ ու ճիշտ դիրքորոշումն է, երբ դու կարողանում ես քո մեջ եղած շնորհը ծառայեցնել ազգիդ, այս պարագայում՝ նաեւ ծննդավայրիդ:

Կուզեի պատգամել եկող սերունդներին՝ նույն սքափությունը պահել, ինչ «Վրաստանը», միշտ հիշեք, որ հայերն ու վրացիները պետք է միասնական լինեն չարյացակամ երրորդին դիմակայելու համար: Սիրելի «Վրաստան», քեզ նոր թափ ավանդապաշտ առաքելությանդ մեջ...

*ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐ*
*Բանաստեղծ-թարգմանիչ,*
*Թբիլիսիի պատվավոր քաղաքացի*

## ՄԵՐ ՄԻԱԿ ՀՆԱՄԵՆԻ, ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պաշտոնաթերթում հայտնվելու էր իմ անունը, ու հաջողություններիս մասին խոսելու էր ծննդավայրս՝ Ծալկայի շրջանի թերեւս ամենահեռավոր Խաչգյուղը եւ ամենակարեւորը՝ ծնողներս: «Արդյունքը՝ գերազանց», ահա այսպես էր կոչվում «Վրաստանում» հոդվածն իմ մասին, որ մասունքի պես պահում եմ առայսօր: Իսկ ով գիտե, թե «Վրաստանը» գնահատվելու նման հաճույք քանի՜-քանիսին է պարգեւել... Մեր միակ հնամենի, շնորհավոր 100-ամյակդ, շնորհավորում եմ Ձեզ, պարոն Վան Բայբուրթյան, շնորհավորում եմ խմբագրության յուրաքանչյուր աշխատակցին ու նաեւ մեզ՝ ընթերցողներիս: Արդեն 100 տարի «Վրաստանը» մեր տարբեր սերունդների ուղեկիցն է, մայրենիով մեր լրատուն, մտավորականության հավաքատեղին ու երաշխիքը: Ուստի, բոլորս պետք է նպաստենք մեր թերթի անխափան գոյությանը՝ որպես կապող օղակ, որպես հայ-վրացական կամուրջ: Խաղաղ ընթացք քեզ, «Վրաստան», խաղաղության պայմաններում...

*ԼԻԱՆԱ ՓԻԼԹՈՅԱՆ*
*Խաչգյուղի հանրային դպրոցի տնօրեն*
*Ծալկայի մունիցիպալիտետ*

КՈՉՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ

# ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԻՄ ԲԱԺԻՆ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒՆԵԻ

### *Թբիլիսիից Սվանեթի կիլոմետրեր կտրող ու երեխաներին կրթող Նինո Անդրիասովան*

***Նինո Անդրիասովան 17 տարի ապրեց Մոսկվայում, բայց տարիներ առաջ վերադարձավ Թբիլիսի եւ սկսեց աշխատանք փնտրել: 2018 թվականից ապրում է Մեստիայում, իսկ հունվարից միանգամից երկու գյուղերում՝ Մուլախիում եւ Էցերիում, ռուսաց լեզու է դասավանդում: Մինչեւ մեքենա գնելը երեխաների հետ դաս անցկացնելու համար, ոտքով կիլոմետրեր է կտրել, բայց դա բնավ չի խանգարել գործը սիրով կատարելուն:***

***Նինոն ծնվել եւ մեծացել է Թբիլիսիում, 11 տարեկանում մոր հետ՝ բնակություն հաստատել Մոսկվայում:***

- Մոսկվայում ավարտեցի դպրոցը, ապա՝ համալսարանը: Ծագումով հայեր ենք, Ղարաբաղից ենք, քաղաք Շուշիից, բայց այնտեղ բարեկամներ չունենք: 1917 թվականին իմ նախնիները տեղափոխվել են Թբիլիսի, տատիկս այդ ժամանակ մեկ ամսական է եղել: Հայրս ապրել է Սուխումիում, աբխազական արյուն էլ ունենք փաստորեն: Հենց այդտեղ էլ մահացել է, երբ մայրս հղի է եղել ինձանով: Ցավոք, միայն լուսանկարներով եմ ճանաչում հայրիկիս: Մայրս ֆիզիկոս է, Թբիլիսիի պետական համալսարանն է ավարտել եւ տարիներ շարունակ աշխատել որպես մանկավարժ: Այժմ 77 տարեկան է, մենակ է ապրում Մոսկվայում եւ աշխատում մանկական քաղցկեղի հիվանդանոցում: Երեխաներն այդտեղ ամիսներով են մնում, ուստի նրանց համար հատուկ դպրոց է բացված, որտեղ եւ մայրս մաթեմատիկա է դասավանդում: Ամեն ամառ գալիս է Վրաստան:

***- Նինո, իսկ Վրաստան գալուց առաջ ինչո՞վ էիք զբաղվում:***

- Ավարտել եմ քիմիայի ֆակուլտետը, մեքենայի անվադողերի պատրաստման մասնագետ եմ, բայց երբեք չեմ աշխատել իմ մասնագիտությամբ: Ճիշտ է, Ռուսաստանում բազմաթիվ գործարաններ կան, ուր ռետինե անվադողեր են արտադրում, բայց այդտեղ աղջիկների պահանջը հազվադեպ է եւ, բացի այդ, շատ ցածր են վարձատրում: Ընդ որում, նույն աշխատանքի դիմաց կնոջն ավելի քիչ են վճարում, քան տղամարդուն, նման դեպքերն այնտեղ շատ են:

Երկու տարի Մոսկվայի վրացական համայնքում աշխատեցի՝ որպես ադմինիստրատոր: Տարբեր միջոցառումներ, վրաց լեզվի անվճար դասընթացներ, ցուցահանդեսներ, պոեզիայի երեկոներ էինք կազմակերպում, մի խոսքով, փորձում էինք նպաստել վրացական մշակույթի ճանաչելիությանն ու տարածմանը: Ուրախանում էի, որ Մոսկվայում իմ փոքրիկ անկյունն ունեի՝ իմ բաժին Վրաստանը: Միգուցե տարօրինակ է, բայց հոգով ու սրտով սիրում եմ Վրաստանը: Չգիտես ինչու, բոլորին թվում է, թե այստեղից գնալով, այնտեղ՝ դրախտում են հայտնվելու, որ լավ է այնտեղ, ուր մենք չկանք, թեեւ իրականում այդպես չէ: Եվ ահա, մի օր, ես ամեն ինչ թողեցի ու նորից սկսեցի ապրել:

***- Ենթադրում եմ՝ այդ որոշումը միանգամից չի կայացվել...***

- Ամեն ամառ գալիս էի Վրաստան ու միշտ՝ ընդմիշտ վերադառնալու մեծ ցանկությամբ: Պարզվում է, երբ նոր էինք Մոսկվա ոտք դրել, անմիջապես սկսել եմ լացել՝ խնդրելով, որ հետ գնանք ու պնդելով, որ իմ տունն եմ ուզում: Այնտեղի կյանքին այդպես էլ չհարմարվեցի: Ի վերջո, եկա այն եզրակացության, որ եթե չվերադառնամ, ապա հոգեպես կմեռնեմ: Մանկուց սիրել եմ շրջագայել եւ հատկապես՝ լեռներում: Ուղեւորություններ էինք կազմակերպում Սվանեթի, Խեւսուրեթի, Թուշեթի: Վերին Սվանեթիում առաջին անգամ եղա 2016 թվականին եւ այնպես հավանեցի, որ հաստատապես որոշեցի՝ այստեղ եմ ապրելու: Դրանից հետո ամռան ամիսներին միշտ գալիս էի մի քանի օրով:



***- Ձեր մայրիկն ինչպե՞ս ընդունեց այս որոշումը:***

- Շատ էր անհանգստանում, բայց բացատրեցի, որ ո՛չ ֆիզիկապես, ո՛չ բարոյապես այլեւս չեմ կարող այստեղ մնալ: Ասացի՝ եթե չգնամ, ապա պարզապես կգժվեմ եւ ոչ թե կապրեմ: Հոգեպես ընկճված էի, շատ ագրեսիվ էի դարձել, մինչդեռ իրականում այդպիսին չէի:

Գիտեի, որ Վրաստանում աշխատանք գտնելն այդքան էլ հեշտ չէ, մանավանդ՝ իմ մասնագիտությամբ, բայց համարձակություն առա ու վերադարձա: Որոշ ժամանակ զբոսաշրջության ոլորտում փորձեցի ուժերս՝ ուղեւորություններ էի կազմակերպում ու որպես գիդ աշխատում: Այդ ընթացքում Սվանեթի ավելի հաճախ էի բարձրանում: Այնպես էի հավանում այդ շրջանը, որ որոշեցի հենց այդտեղ ուսուցչություն սկսել եւ ռուսաց լեզու դասավանդել տեղի աշակերտության շրջանում, որովհետեւ լսել էի, որ ռուսաց լեզվի մանկավարժի կարիք ունեին: Հարցրի, թե ինչ պետք է անեմ, պարզվեց՝ առարկայական քննություն էի հանձնելու, զուգահեռ՝ մասնակցելու էի թրեյնինգների: Քննություն հանձնեցի եւ հունվարից սկսեցի աշխատել Մուլախիում, իսկ սեպտեմբերից՝ նաեւ Էցերիի դպրոցում:

***- Մո՞տ են այս գյուղերը:***

- Մեքենաս նոր եմ գնել, բայց մինչ այդ, բավական դժվար ամիսներ անցա: Էցերիի եւ Մեստիայի միջեւ 26-28 կմ է: Վարորդների հետ պայմանավորվել էի եւ շաբաթը երեք անգամ Թբիլիսիի երթուղայինով հասնում Էցերի, հետո մեկ կիլոմետր ոտքով էի գնում, ժամը 9-ին արդեն դպրոցում էի եւ, եթե դպրոցը բաց է, սպասում էի շենքին, եթե ոչ՝ դրսում, քանի որ ուսումնական գործընթացն այստեղ ժամը 10-ին է սկսվում: Դասերից հետո էլ ստիպված էի երկու ժամ սպասել, որպեսզի տրանսպորտով հասնեի Մեստիա: Մինչեւ Մուլախի 18 կմ ոտքով էի գնում, քանի որ ընդգրկված չեմ «Սովորեցրու լեռներում» ծրագրում եւ սեփական կամքով եմ Սվանեթիում, վարձը ինքս եմ վճարում եւ ոչ էլ բարձր աշխատավարձ ունեմ: Ինչպես բացատրել են ինձ, մինչեւ ավագ մանկավարժի կարգավիճակ չստանամ, չեմ կարող այս ծրագրին միանալ: Այդ պատճառով էլ վարկ ստանալու նպատակով դիմեցի բանկ: Այժմ Սվանեթիի խորդուբորդ ճանապարհները հատում եմ իմ սեփական մեքենայով ու կրկին սեփական ծախսով...

***- Հուսով եմ՝ երեխաները հասկանում են, թե ինչ դժվար գործ եք անում հանուն նրանց:***

- Բնականաբար, հասկանում են... եղել են դեպքեր, երբ տնային առաջադրանքը չեն կատարել, եւ ես բացատրել եմ, որ հանուն ձեզ այդքան ճանապարհ եմ ոտքով անցնում, ուզում եմ ձեզ մի բան սովորեցնել, իսկ դուք ծուլանում եք, այդպես չի կարելի: Զարմացան, թե՝ բա իսկապե՞ս ոտքով եք գալիս հանուն մեզ, չգիտեինք ու սրանից հետո ամեն ինչ կանենք: Եվ իսկապես այդ օրվանից բոլոր աշխատանքները պարտաճանաչ կատարում են: Եվ նույնիսկ հիմա, երբ գիտեն մեքենայի մասին:

***- Հիշու՞մ եք երեխաների հետ առաջին հանդիպումը:***

- Շատ էի անհանգստանում: Չնայած, որ տատիկս նույնպես ռուսաց լեզվի ուսուցչուհի էր, մայրս էլ մանկավարժ է, ու նրանցից շատ բան եմ սովորել մանկավարժության ու մանկավարժի էության մասին: Ժամանակակից երեխաների հետ պետք է ընկեր լինես, միաժամանակ սահմանն ու խստությունը պահպանես: Պետք է ամեն ինչ անես, որպեսզի քո առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնես, այլապես ոչինչ չի ստացվի, քանի որ նախկին ու ներկա սերունդների միջեւ սարուձորի տարբերություն կա:

Ինչ վերաբերում է երեխաներին, նրանք ինձ շատ ջերմ ընդունեցին: Սկզբում բարդույթ ունեին, որ ռուսերեն չգիտեն եւ չեն խոսում: Ես նրանց բացատրում էի, որ դա ամոթ չէ, իսկ ռուսաց լեզվի իմացությունն անհրաժեշտ է հենց նրա համար, որ զբոսաշրջությունն այսքան զարգանում է: Փորձում եմ ամեն կերպ հետաքրքրություն առաջացնել եւ սիրել տալ իմ առարկան: Երբեմն երգով եմ սովորեցնում, երբեմն էլ հետաքրքիր նյութեր եմ հավաքում եւ տվյալ շաբաթը նվիրում այդ թեմային, մասնակիցներին պարգեւատրում վկայագրերով, ինչը շատ է խթանում նրանց:

***- Արդյոք չե՞ք դժվարացել հաշտվել տեղի բնակչության, ծես-ադաթի, բնակլիմայական պայմանների հետ:***

- Իմ մտերիմներից մեկը սվան է, ես նրան հասցրել եմ լավ ճանաչել: Սվանները աշխատասեր, հավատավոր, ավանդույթներին հավատարիմ, տաղանդավոր ժողովուրդ են: Լավ ընդունեցին, հաճախ են հրավիրում ինձ իրենց տոնակատարություններին ու վերաբերվում տան անդամի պես: Տեղացիները, թե ընդունեցին ու սիրեցին, իրենց սրտի մեջ են առնում քեզ, սակայն, թե հանկարծ նկատեն գոռոզություն եւ մեծամտություն, չեն հանդուրժի ու ուղիղ կասեն՝ լավ կաց, ճամփրուկդ դռան մյուս կողմում է:

Շնորհակալ եմ Աստծուն, որ ամեն տեղ ու միշտ լավ մարդկանց է հանդիպեցնում:

***ՆԻՆՈ ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ***
***«Կվիրիս պալիտրա» թերթի թղթակից հատուկ «Վրաստանի» համար***

COVID - 19

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՐՐՈՐԴ ԱԼԻՔԸ ԲԱՑԱՌՎԱԾ ՉԷ

## ՄԱՐՏԻ 25-ԻՑ ՍԿՍՎԵՑ 65 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ



*Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեի հայտարարությամբ, ելնելով այն բանից, որ երկրում դիմակ կրելու ցուցանիշը նվազագույնի է հասցվել, քաղաքացիները չեն պահում սոցիալական հեռավորություն, չի բացառվում, որ երկրում սկսվի կորոնավիրուսի 3-րդ ալիքը:*

- Մենք սպասում էինք դրան: Յուրաքանչյուր սահմանափակման չեղարկումից առաջ մշտապես հայտարարում ենք, որ կարեւոր է զգուշություն պահպանել, որպեսզի սահմանափակումները վերացած մնան երկար ժամանակ,- հայտարարեց Եկատերինե Տիկարաձեն եւ հավելեց, որ հասարակությունը շատ շուտ մոռացավ, թե երկրում ինչ իրավիճակ էր նախորդ տարեվերջին:

Վրաստանի առողջապահության նախարարի հայտարարությամբ, պատվաստումների խորհրդի նիստում որոշվել է, որ 65 տարեկանից բարձր անձինք ներգրավվելու են կորոնավիրուսի դեմ պատվաստման գործընթացին:

- Պատվաստումների գործընթաց կներգրավվեն տարիքային խմբեր, մասնավորապես՝ պատվաստումները հասանելի կլինեն 65 տարեկանից բարձր տարիքի մեր քաղաքացիների համար: Սրանք ամենախոցելի խմբերն են, որոնց համար կովիդ վարակը ամենավտանգավորն է, ուստի մենք որոշեցինք արագացնել գործընթացը: Համապատասխան հարթակում գրանցումն արդեն սկսված է: Պատվաստումների գործընթացը կշարունակվի բժշկական անձնակազմի բաղադրիչում, բայց 25 օր անց մեր բժիշկները չեն կարողանա օգտագործել կառավարման հատուկ բաղադրիչը, որը նրանց համար հասանելի էր այս ընթացքում,- նշեց Եկատերինե Տիկարաձեն եւ հավելեց, որ պատվաստվելու համար պետք է գրանցվել booking.moh.gov.ge հարթակում, որտեղ մանրամասն նշվում է՝ երբ, ինչ տեսակի պատվաստանյութով եւ որտեղ պատվաստվել:

Անդրադառնալով պատվաստանյութերի ժամկետի թեմային՝ Վրաստանի առողջապահության նախարարը հայտարարեց, որ երկիր ներմուծված պատվաստանյութերի պահպանման ժամկետը պաշտպանված է: Ըստ նրա, այդ առումով ռիսկ չկա:

- Դուք գիտեք, որ թիրախը օրական մինչեւ 3000 մարդու պատվաստելն է: Ընդլայնված խմբերը ներառում են նաեւ ծերանոցի շահառուներին եւ աշխատակազմին: Իհարկե, նրանք նույնպես կմիանան պատվաստումների գործընթացին:

Ինչ վերաբերում է պատվաստումների ժամկետներին, ապա այդ ժամկետները պաշտպանված են, եւ փաստորեն, պետք է ասեմ, որ մենք այս առումով ռիսկեր չունենք: Այս պատվաստանյութը մենք չենք ունենա մինչեւ տարեվերջ, այն ավելի շուտ կսպառվի,- հայտարարեց Եկատերինե Տիկարաձեն:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 126 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 126 128 373 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 2 768 660 հազարը: Ապաքինվել է 101 միլիոն 764 862 մարդ:*

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **30 774 033** դեպք: Այստեղ մահացածների թիվը **559 744** է, երկրորդ տեղում՝ **Բրազիլիան** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **12 324 765**-ի, մահացածներինը՝ **303 726**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն** է: Այստեղ վարակվել է **11 846 652**, մահացել՝ **160 983** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **4 501 859**, վարակի հետեւանքով մահացել՝ **97 017** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Իսպանիան, Թուրքիան ու Գերմանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **188 446-ի**, մահացածներինը՝ **3 434-ի**, ապաքինվածներինը՝ **170 160-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **250 921** մարդ: Վարակից մահացել է **3 421,** ապաքինվել՝ **234 382** մարդ:

**Վրաստանում** վերջին տվյալներով, վարակվել է **279 446,** մահացել՝ **3 738,** ապաքինվել՝ **271 585** մարդ:

*Մարտի 26-ին կորոնավիրուսով վարակման **419** նոր դեպքերից **203-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 26, Իմերեթիում՝ 64, Քվեմո Քարթլիում՝ 27, Շիդա Քարթլիում՝ 22, Գուրիայում՝ 16, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 18, Կախեթիում՝ 9, Մցխեթա-Մթիանեթիում՝ 13, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 17, Սամցխե-Ջավախեթիում՝ 4:***

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ՉՆԱՅԱԾ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔԻՆ, ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ»

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԽՍՏԱՑՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Համակարգող խորհրդի ընթացքում տեղի ունեցավ մեծ քննարկում, որի ընթացքում Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը շեշտը դրեց հանձնարարականների կատարման խիստ վերահսկողության վրա: Մենք պետք է հնարավորինս բարձրացնենք պաշտպանիչ դիմակ կրելու տեմպերը: Ես մեկ անգամ եւս կոչ եմ անում բնակչությանը՝ հեռավորություն պահել, ձեռքերը հաճախակի մշակել, ախտահանել եւ, հետեւաբար, խոշոր հավաքույթներից խուսափել: Դրան գումարվում է պատվաստումների ակտիվացումը: Մենք ունենք պատվաստմանը հաջորդած ողբերգական դեպք: Ամեն ինչ չափազանց դժվար է, բայց երբ սթափ ես դատում, իհարկե, պատվաստումը այլընտրանք չունի: Համավարակը մոտիվացնելու համար անհրաժեշտ է ավելի շատ աշխատանք կատարել: Առանց դրա համաճարակը չի վերանա,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:



Նրա խոսքով, վերջին օրերին համավարակային իրավիճակի վատթարացման միտում է նկատվում, թեեւ մահացության հետ կապված դինամիկան նվազում է:

- Ես չեմ ասի, որ դեպքերի թվի թռիչքային աճ ունենք: Կայունացումը շարունակվում է, բայց վերջին չորս-հինգ օրվա ընթացքում կայուն դեպքերի փոքր, բայց աճ է նկատվում (100000 բնակչի հաշվով):

Ակտիվ դեպքերի թիվը նույնպես աճում է: Սակայն այսօր մահացության հետ կապված դինամիկան նվազում է:

Եթե մարտն ու ապրիլը համավարակային նման իրավիճակով անցնենք, ապա, ամենայն հավանականությամբ, կխուսափենք երրորդ ալիքից: Եթե դեպքերի աճի միտում ունենանք, այսինքն, եթե համավարակային վիճակը վատթարանա, ապա ստիպված կլինենք որոշակի խստացումներ իրականացնել: Իհարկե, առաջին հերթին, պետք է խստացվի կատարման վերահսկողությունը, ապա պետք է մտածել այլ հարցերի մասին,- նշեց Ամիրան Գամղրելիձեն:

# ՄԱՐՏԻ 30-ԻՑ ԿՍԿՍՎԵՆ «Pfizer»-Ի ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

*Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի խոսքով, մարտի 25-ից «Pfizer» պատվաստանյութը հերթի ամրագրման կայք-էջում է, եւ քաղաքացիները կկարողանան ընտրություն կատարել «AstraZeneca»-ի եւ «Pfizer»-ի միջեւ:*



Ըստ նրա, երեքշաբթի՝ մարտի 30-ին, «Pfizer»-ով պատվաստումը կսկսվի Թբիլիսիի, Բաթումիի եւ Քութայիսիի վեց կլինիկաներում:

- «Pfizer»-ի, ինչպես նաեւ «AstraZeneca»-ի արդյունավետությունը շատ բարձր է՝ ինչպես հիվանդության փոխանցումը կանխելու, այնպես էլ՝ բարդ եւ հատկապես մահացու դեպքերը գործնականում վերացնելու իեսանկյունից: Այսպիսով, «Pfizer» եւ «AstraZeneca» պատվաստանյութերի դեպքում, իհարկե, մենք ունենք երաշխավորված որակ,- ասաց Թամար Գաբունիան:

# «Pfizer»-Ը ԲՆՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՌԱՆՁԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՐԴԱՑՈՒՄՆԵՐՈՎ

*Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, պատվաստման պատրաստվող յուրաքանչյուրին հատկացված հարցաթերթիկում ավելանում է եւս մեկ կետ, արդյոք նա հաճա՞խ է օգտագործում լցահարթիչներ (սիլիկոն):*

Գամղրելիձեի պարզաբանմամբ, «Pfizer»-ը բնութագրվում է որոշակի տեղական բարդացումներով այն մարդկանց մոտ, ովքեր հաճախ օգտագործում են լցանյութեր:

- Կանխարգելիչ միջոցը պատվաստմանը նախորդող հարցաթերթիկի լրացումն է: Կա 12 կամ 11 հարց, եթե բոլոր հարցերի դեպքում անձը պատասխանում է՝ այո, բժիշկը կասկածում է, որ հավանական է ռիսկի գործոնը: Այդ դեպքում անձը չի պատվաստվում եւ լրացուցիչ հետազոտությունների ուղարկվում համապատասխան մասնագետների մոտ: «Pfizer»-ը բնութագրվում է որոշակի տեղական եւ ոչ համակարգային, այսինքն՝ ոչ անաֆիլակտիկ բարդացումներով այն մարդկանց մոտ, ովքեր հաճախ օգտագործում են լցանյութեր: Նրանք իմունիզացիայից հետո կարող են ունենալ տեղական բարդացումներ, որոնք հետագա բուժման կարիք ունեն,- հայտարարել է Ամիրան Գամղրելիձեն:

# ՓՈԽՎՈՒՄ Է ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ

*Վրաստանում վերանայել են AstraZeneca պատվաստանյութի օգտագործման կարգը: Առավելագույն անվտանգություն ապահովելու համար որոշում է կայացվել պատվաստում իրականացնել միայն բազմապրոֆիլ կլինիկաներում:*

Խոսքը երկրի 40 հիվանդանոցների մասին է, որոնք վերակենդանացման բաժանմունք ունեն: Ամբուլատորիաներում չեն պատվաստվելու: Սրա հետ կապված, վերանայվել է նաեւ մի շարք բուժաշխատողների պատվաստման գրաֆիկը, որոնք գրանցում են անցել էլեկտրոնային հատուկ հարթակում: Ամբուլատորիաներում արված ամրագրումները կբաժանվեն բազմապրոֆիլ հիվանդանոցների միջեւ:

Պատվաստման գործընթացն ընդհատվել է նաեւ Աջարիայի 4՝ Խելվաչաուրիի, Քեդայի, Շուախեւիի, Խուլոյի շրջաններում:

Ներկայումս Վրաստանում պատվաստվել է մոտ 4000 բուժաշխատող, 5 500-ը գրանցվել ու սպասում են իրենց հերթին:

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, առողջապահության նախարարության հետ համատեղ, շարունակվում է հանրային դպրոցներում ուսուցիչների եւ վարչական անձնակազմի պարտադիր թեստավորման գործընթացը:*

- Կորոնավիրուսի տարածման ռիսկը նվազեցնելու համար, Թբիլիսիի թիվ 100 հանրային դպրոցում թեստավորումն անցկացվում է չորրորդ անգամ:

Մինչ այժմ դպրոցում անցկացված թեստավորումների արդյունքում, վարակի ոչ մի դեպք չի արձանագրվել, ինչը նշանակում է, որ աշակերտների եւ ուսուցիչների համար ստեղծվել է անվտանգ ուսումնական միջավայր:

Երկրի ողջ տարածքում ակտիվորեն ընթանում է հանրային դպրոցների ուսուցիչների եւ վարչական անձնակազմի ստուգման գործընթաց, որն ամբողջությամբ ապահովվում է պետության կողմից,- հայտարարել են կրթության նախարարությունում:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՅԱՑԱՎ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՆԻՊՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՀԵՏ

*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Մայր Աթոռ Սուրբ էջմիածին եւ հանդիպում ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Հանդիպմանը քննարկեցին երկրում ստեղծված իրավիճակի հարցը:*

Հանդիպմանը Հայաստանի նախագահն ու Վեհափառ Հայրապետն անդրադարձան արցախյան պատերազմից հետո ստեղծված իրավիճակին եւ մարդասիրական խնդիրներին, մասնավորապես՝ ադրբեջանական կողմում պահվող հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց վերադարձի, անհայտ կորածների ու զոհվածների աճյունների հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող աշխատանքներին:

Քննարկվել են նաեւ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող խնդիրներ, մասնավորապես, Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում պատմական հուշարձանների եւ սրբավայրերի նկատմամբ դրսեւորվող բարբարոսական վերաբերմունքը:

Արմեն Սարգսյանն ու Վեհափառ Հայրապետն անդրադարձան երկրում ստեղծված իրավիճակին, ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու ուղիներին, ինչպես նաեւ խոսեցին ազգային կարեւորագույն խնդիրների ու մարտահրավերների մասին:



## ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՎԵՑ

*Մարտի 24-ին Հայաստանի Ազգային ժողովը՝ 118 կողմ, մեկ դեմ եւ մեկ ձեռնպահ ձայներով, ընդունեց Հայաստանում ռազմական դրությունը վերացնելու մասին ԱԺ որոշման նախագիծը, որը նախաձեռնել էին ընդդիմադիր «Լուսավոր Հայաստան» եւ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունները:*

Թեեւ ընդդիմության այս նախաձեռնությունն ԱԺ գլխադասային հանձնաժողովում ստացել էր բացասական եզրակացություն, սակայն ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը լիագումար նիստում առաջարկել էր կողմ քվեարկել նախագծին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան քաղաքական պայմանավորվածություններ, անցկացվելու են արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ինչը առնվազն հանգուցալուծման ու քաղաքական կայունության վերականգնման ճանապարհ է, եւ կառավարությունը, այսպես, թե այնպես, մոտ օրերս պետք է հանդես գար ռազմական դրությունը վերացնելու նախաձեռնությամբ:

Քվեարկությունից առաջ, «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը հայտնեց, որ խմբակցությունը կողմ է քվեարկելու:

Հիշեցնենք, որ Հայաստանում ռազմական դրությունը հայտարարվել էր սեպտեմբերի 27-ից՝ պայմանավորված Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմով:

Ըստ Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի օրենքի՝ ԱԺ նախագահը ռազմական դրությունը չեղյալ հայտարարելու մասին Ազգային ժողովի որոշումը ստորագրում եւ հրապարակում է անհապաղ, եթե այդ որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

## ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՄՇՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը մարտի 25-ին մասնակցել է Սփյուռքում գործող ԱՄՆ-ի եւ Կանադայի «Հայ-հյուսիսամերիկյան բժշկական համայնքների» ներկայացուցիչների նախաձեռնած առցանց տեսակոնֆերանսին: Վերջինիս ընթացքում քննարկվել են Հայաստան ներմուծվող բարեգործական բեռների հետ կապված հարցերը:*

- Մենք բարձր ենք գնահատում հայրենիքին ուղղվող Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը: Դժվարին օրերին Սփյուռքը հայրենիքի կողքին է: Սփյուռքի թե' նյութական, թե' հոգեբանական աջակցությունը կարեւոր նշանակություն ունի մեզ համար, ինչի համար կցանկանայի շնորհակալություն հայտնել յուրաքանչյուրին: Կարեւորում ենք Սփյուռքի մեր հայրենակիցների հետ մշտական խորհրդակցությունները, որոնց ընթացքում հնարավորություն ունենք ոչ միայն ծանոթանալ միմյանց կարծիքներին ու տեսակետներին, այլեւ փոխանակվել անհրաժեշտ տեղեկատվությամբ,- ասաց Տիգրան Ավինյանը:

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել բեռնափոխադրումների մաքսազերծման, բեռների արագ բաշխման մեխանիզմների, բարեգործական բեռների պահանջարկի եւ Հայաստանում լիազոր մարմնի հետ համագործակցության հարցերին:

## «SPUTNIK-V» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՍՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

*Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինը հույս ունի, որ շատ շուտով ռուսական «Sputnik-V» պատվաստանյութը կմատակարարվի Հայաստան:*

- Համենայնդեպս, մենք՝ որպես դեսպանություն, ամեն կերպ աջակցում ենք դրան,- ասել է դեսպանը:

Ինչ վերաբերում է պատվաստանյութը Հայաստանում արտադրելու հնարավորություններին, դեսպանն ասաց, որ այդ հարցի շուրջ դեռեւս համագործակցում են ՀՀ առողջապահության նախարարությունը եւ ռուսական ներդրողները:

Հայաստանում կորոնավիրուսի դեմ պայքարին միացած բուժկենտրոնների բուժաշխատողների շրջանում կամավորության սկզբունքով կորոնավիրուսի դեմ պատվաստում է իրականացվում Ռուսաստանի նվիրած «Sputnik-V» պատվաստանյութերով: Վերջին տվյալներով, առայժմ միայն մոտ 600 բուժաշխատողներ եւ ռիսկի խմբի քաղաքացիներ են պատվաստվել: Հայաստանը Ռուսաստանի հետ երկկողմ աշխատանքների արդյունքում նախատեսում է առաջիկայում գնել «Sputnik-V» պատվաստանյութ, զուգահեռ աշխատանքներ է տանում պատվաստանյութ ձեռք բերելու Covax հարթակի միջոցով:

Մեկ շաբաթ առաջ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ասել էր, որ մասնագիտական հանձնաժողովը հավանություն էր տվել երկրում «Sputnik-V», «AstraZeneca» եւ «Pfizer» պատվաստանյութերի կիրառմանը:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԸ ՄՆՈՒՄ Է ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

*Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը մարտի 18-ին մերժեց Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գույքի վրա դրված կալանքը վերացնելու վերաբերյալ պաշտպանների միջնորդությունը:*



Նախորդ դատական նիստի ժամանակ պաշտպանը միջնորդել էր՝ հանել Սերժ Սարգսյանի 489 միլիոն 160 հազար 310 դրամի, շուրջ 1 միլիոն դոլարի սահմանաչափով շարժական ու անշարժ գույքի եւ ֆինանսական միջոցների, բաժնեմասերի, արժեթղթերի վրա դրված կալանքը:

Հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռքբերված ապացույցների համակցության հիման վրա պարզվել է, որ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կազմակերպմամբ եւ «Ֆլեշ» ՍՊ ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանի դրդմամբ, գյուղատնտեսության նախարարի նախկին տեղակալ Սամվել Գալստյանի ու նույն նախարարության բուսաբուծության վարչության պետ Գեւորգ Հարությունյանի օժանդակությամբ, գյուղատնտեսության նախկին նախարար Սերգո Կարապետյանի կողմից 2013 թվականի հունվարի 25-ից փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածում Կառավարության պահուստային ֆոնդից վատնվել է պետական աջակցության ծրագրերի իրականացման ընթացքում հատկացված սուբսիդիայի առանձնապես խոշոր չափերով գումարը:

## ԱՐՏԱԿ ԴԱՎԹՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ



*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությամբ, Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ կնշանակվի գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը:*

*Հայաստանի վարչապետի հայտարարության մեջ ասվում է. «Քանի որ երկրի նախագահ Արմեն Սարգսյանը չի ստորագրել վարչապետի առաջարկը եւ ոչ էլ բողոքարկել է Սահմանադրական դատարանում, բանակի գլխավոր շտաբի պետ է դարձել ներկայացրած թեկնածու Արտակ Դավթյանը»:*

*Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարյանի հետ Նիկոլ Փաշինյանի անհամաձայնությունն սկսվել նրանից հետո, երբ երկրի վարչապետը պաշտոնից հեռացրեց գլխավոր շտաբի պետի տեղակալին: Դրանից հետո Գասպարյանը, այլ զինվորականների հետ միասին, պահանջեց Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:*

## ՀԱՅՏԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

*Պատերազմի հետեւանքով Արցախի վերահսկողությունից դուրս մնացած բնակավայրերից տեղահանված ավելի քան 100 ընտանիք է գրանցվել Հայաստանում Արցախի կառավարության օպերատիվ շտաբում Արցախ վերադառնալու նպատակով: Նշենք, որ Արցախ վերադառնալու եւ բնակվելու ցանկություն ունեցող տեղահանված ընտանիքների հայտագրումը սկսվել էր դեռեւս այս փետրվարին:*

*Անցյալ տարվա դեկտեմբեր եւ այս տարվա հունվար ամիսներից առայսօր Արցախ է վերադարձել մոտ 43 ընտանիք, որոնք բնակություն են հաստատել Ասկերանի շրջանի Բադարա եւ Դահրավ գյուղերում:*

## ԲԱՐՁՐԱՑՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԻՔԸ

*Մարտի 25-ին Հայաստանի Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց օրենքի նախագիծ, որով նախատեսվում է բարձրացնել պայմանագրային զինծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը:*

*«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն ԱԺ նիստում քվեարկությամբ ստացավ 113 կողմ, 2 ձեռնպահ ձայն:*

*Գործող օրենսդրությամբ, պայմանագրային զինվորական ծառայության մեջ ներգրավվելու՝ ծառայելու հնարավորություն չկա մի դեպքում 45 տարեկանից, մյուս դեպքում՝ 40-ից հետո: Փոփոխությունը նախատեսում է այդ շեմը բարձրացնել մինչեւ 63 տարեկանը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԵԱՀԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՀ

*Մարտի 24-ին տեղի է ունեցել Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Անվտանգության համագործակցության ֆորումի ԱՄՆ նախագահության եզրափակիչ նիստը, որի ընթացքում ԱՄՆ-ը Հայաստանին է փոխանցել ԵԱՀԿ Անվտանգության համագործակցության ֆորումի (ԱՀՖ) չորսամսյա նախագահությունը:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ



***28.03.2021 Ծաղկազարդ. Յիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ***

Սուրբ Յարութեանը նախորդող կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը, որը խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Ծաղկազարդն հռչակել է որպես Մանուկների օրհնության օր:

***29.03.2021 Ավագ երկուշաբթի***

***30.03.2021 Ավագ երեքշաբթի հիշատակվում է «Տասը կույսերի» առակը***

***31.03.2021 Ավագ չորեքշաբթի***

***1.04.2021 Ավագ հինգշաբթի***

***2.04.2021 Ավագ ուրբաթ***

***3.04.2021 Ճրագալույց Զատկի***

Ըստ եկեղեցական կարգի, երեկոյան մատուցվում է Ճրագալույցի Սուրբ պատարագ, որի ավարտին ազդարարվում է Փրկչի հրաշափառ Յարության ավետիսը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»: Այս ավետիսով ավարտվում է Մեծ Պահքը:

## ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

*Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիներում ամեն կիրակի կազմակերպվում է հավատացյալների հյուրասիրություն:*



Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությամբ, նախաձեռնությունն իրականացվում է հավարտ Սուրբ պատարագի: Օրհնության արարողությանը հաջորդում է հավատացյալների հյուրասիրությունը քաղցրավենիքով, տաք թեյով կամ սուրճով: Սա նաեւ հնարավորություն է ստեղծում հավատացյալների զրույցի, ծանոթությունների եւ շփման համար:

Այն իրականացվում է Սուրբ Գեւորգ եկեղեցու «Եկեղեցասեր կանանց» խմբի (ղեկ.՝ Աիդա Չախոյան) եւ Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության (ղեկ.՝ Սուսաննա Խաչատրյան) նախաձեռնությամբ:

Միջոցառման կազմակերպմանը ակտիվ մասնակցում են հավատացյալներ Մարինե Սումախյանը, Քրիստինե Սահակյանը, Եվգենյա Մարկոսյանը, Ժաննա եւ Քրիստինե Յարությունյանները, Մարինե Խաչատուրովան, Շուշանիկ Ումբրեյանը, Մարիաննա Ուբմազյանը եւ ուրիշներ:

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ՓԱՐԱՋԱՆՈՎՅԱՆ ՆՌՆԵՆԻՆ ԿԶԱՐԴԱՐԻ ԽՈՋԻՎԱՆՔԻ ՊԱՆԹԵՈՆԸ



*Վաղը՝ մարտի 28-ին, ժամը 15:00-ին, Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնի տարածքում կանգկացվի փարաջանովյան արվեստի խորհրդանիշ նռնենու տնկարկման արարողություն: Ի համալրումն օրվա խորհրդի, նռնենու շուրջ կլցվի Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնից, Սերգեյ Փարաջանովի շիրմից բերված հողը:*

*Նռնենու տնկարկման նախաձեռնողները վրաց հայտնի ռեժիսոր եւ կինոօպերատոր Խոսե Մաջիներեն (Գիա Ալավիձե), Թբիլիսիի «Թումանյանի տուն» կենտրոնն ու «Վրաստան» թերթն են: Հիշեցնենք, որ անցյալ շաբաթ նման արարողություն անցկացվեց նաեւ Թբիլիսիի Բուսաբանական այգում:*

*Մինչ այդ, ժամը 12:00-ին Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի գլխավորությամբ Սերգեյ Փարաջանովի հիշատակին կկատարվի հոգեհանգստյան պաշտոն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

## ԱՊՐԼԻ1-ԻՑ ՀԻՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԿՏՈՒԳԱՆՎԵՆ

*Ապրիլի 1-ից հին համարանիշ ունեցող ավտոմեքենաների վարորդներն, առանց գրանցման մեքենան վարելու դեպքում, կտուգանվեն 250 լարիով, իսկ մեքենաները կտեղափոխվեն տուգանային հրապարակ: Ավտոմեքենաների հին համարանիշերը փոխելու վերջնաժամկետը 2021 թվականի մարտի 31-ն է:*

Հին համարանիշերով մեքենաների տեղաշարժը ապրիլի 1-ից արգելվում է, իսկ ինչ վերաբերում է համարանիշի փոփոխմանը, ապա հին պետհամարանիշերը հնարավոր է փոխել ցանկացած պահի: Ավելին, վարորդը կարող է առանց մեքենայի, միայն համարանիշը տանել սպասարկման կենտրոն եւ այն փոխարինել նորով: Կարող է նաեւ հեռախոսային ծրագրի միջոցով, առցանց փոխել ավտոմեքենայի համարանիշը, ապա՝ սպասարկման կենտրոնից վերցնել այն:

ՍՊՈՐՏ

### ՖՈՒՏԲՈԼ. ՇՎԵԴԻԱ - ՎՐԱՍՏԱՆ՝ 1:0<br>ԼԻԽՏԵՆՇՏԵՅՆ - ՀԱՅԱՍՏԱՆ՝ 0:1

Մեկնարկեցին աշխարհի 2022 թվականի առաջնության որակավորման խմբային փուլի հանդիպումները: Եվրոպական «B» խմբում Վրաստանի հավաքականը մեկնարկային փուլում մրցակցի դաշտում նվազագույն՝ 0:1 հաշվով զիջեց Շվեդիայի հավաքականին: Վրաց ֆուտբոլիստները հաջորդ հանդիպումը կանցկացնեն մարտի 28-ին՝ սեփական հարկի տակ, մրցակիցը Իսպանիայի հավաքականն է, իսկ մարտի 31-ին Յունաստանում Վրաստանը կմրցի տեղի հավաքականի հետ:

«J» խմբում Հայաստանի թիմը մրցակցի դաշտում տոնեց առաջին հաղթանակը: Հայ ֆուտբոլիստները 1:0 հաշվով առավելության հասան Լիխտենշտեյնի հավաքականի նկատմամբ: Հաջորդ հանդիպումը մարտի 28-ին է, Հայաստանի հավաքականը կհյուրընկալի Իսլանդիայի թիմին, իսկ մարտի 31-ին՝ Ռումինիայի հավաքականին:

### ՎՐԱՑ ՌԵԳԲԻՍՏՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

Վրաստանի ռեգբիի հավաքականը Եվրոպայի առաջնության մրցաշարում տոնեց երրորդ հաղթանակը: Այս անգամ վրաց մարզիկները մարտի 20-ին, Կալինինգրադում 23:6 հաշվով պարտության մատնեցին Ռուսաստանի հավաքականին եւ առաջնության երեք արտագնա հանդիպումներում շահած 6 միավորով, թիմը շարունակում է գլխավորել առաջնության ընթացիկ խաղաշրջանի աղյուսակը:

Մարտի 27-ին եւ հունիսի 27-ին սեփական հարկի տակ Վրաստանի հավաքականը կհյուրընկալի Ռումինիայի եւ Բուլղարիայի հավաքականներին:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բեմարվեստի տեսակ: 3.Լեռ Արեւմտյան Հայաստանում, որը համարում են աշխարհի 8-րդ հրաշալիքը: 10.Ռուսաստանի Դաշնության Ած-ն: 12.Ժամանակի միավոր: 15.Ճիճու, զեռուն: 16.Լեռ Վրաստանի Փարվանա լճի մոտ: 17.Յուր, ատր, բոց: 18.Յանրահայտ երգիչ ... Սիմոնյան: 19.Զզվանք, գարշանք (Սեռ. հոլ.): 20.Վրաստանի նախկին նախագահ Սաակաշվիլու կինը: 23.Կոմիտասի գովերգած յարը: 27.Ֆրանսիայի նախագահ Էմանուել ...: 29.Զազի լեգենդը, սիգարի արքան: 32.Պատին փակցված լամպ: 33.Ալ.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 35.Երկարության չափման միավոր: 36.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 37.Շտապ, ոչ դանդաղ: 38.Անձնական դերանուն: 39.Երեսի ածիլվող մազերը (բրբ.): 40.Փոքր չափի, նվազ: 42.Քանզի, քանի որ (Աստվածաշնչյան): 43.Յարյուր տարի: 44.Թաղամաս Թբիլիսիում: 46.Առնող, առեւտուր անող: 48.Ֆուտբոլային ...: 50.Կույր, հողափոր կրծող: 51.Յովհ. Թումանյանի հեքիաթի հերոսուհի: 52.Անապատային տաք քամի: 53.Նորից, հաջորդող անգամը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բնակավայր Արեւմտյան Հայաստանում, որը նշանակում է բերկրանք, ջերմություն: 2.Օրվա մաս: 4.Յայկական կարմիրը: 5.Տարածաշրջան Վրաստանում, Յայաստան- Վրաստան ճանապարհահատվածում: 6.Սովորույթ, ավանդույթ (բրբ.): 7.Կղզիական պետություն: 8.Մարզ Իսպանիայում: 9.Իսպանացի բանաստեղծ, դրամատուրգ Գարսիա ...: 11.Խավար, անտեսանելի: 13.Ստորադասական շաղկապ: 14.Գինետուն: 21.Առողջարանային քաղաք Յայաստանում: 22.Ստեղծագործության տեսակ: 23.Ցուցական դերանուն: 24.Երշիկի տեսակ: 25.Գլխավոր երակը: 26.Բերդ, ամրոց Վրաստանում: 27.Վրաստանի նախկին մայրաքաղաքը: 28.Ծաղկի տեսակ: 30.Արգո նավի ղեկավարը: 31.Յռիփսիմյան կույս, որ Վրաստանում կոչվեց Նինո: 34.«01-99» ֆիլմի բրիգադիրը: 35.Խանութների ցանց Թբիլիսիում: 40.Ասորի պատմիչ ... Աբաս Կատինա: 41.Ազնիվ, ոչ խարդախ, անաչառ: 43.Տարտու քաղաքը հնում: 44.Գետ ՌԴ-ում: 45.Իրավացի, նվիրված եւ հավատարիմ լինելու խոստում, ուխտ: 46.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 47.Քաղաք Ռուսաստանում: 49.Շվեյցարիայի մայրաքաղաքը:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Օղանցք: 8.Լողորդ: 10.Նեստոր: 11.Ֆիգարո: 12.Թթուջուր: 15.Մերսի: 17.Ստրուկ: 18.Լիմիտ: 21.Սուփրա: 23.Սեկա: 24.Ակն: 26.Տրե: 27.Անթարի: 29.Յոգս: 32.Շվեդիա: 33.Ախոյան: 35.Յաք: 37.Զին: 39.Կաղմիում: 42.Աբեղացու: 45.Արմեն: 47.Ճաղատ: 48.Գալիք: 50.Դավո: 51.Յամոզիչ: 52.Վիցին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Աղրիատիկ: 2.Աննամուս: 3.Աքսոր: 4.Խորք: 5.Զորջ: 7.Ցերեկույթ: 8.Լոքի: 9.Դեր: 13.Ուլիս: 14.Ուլիկ: 16.Սարտր: 19.Մեթոդ: 20.Տաքսա: 22.Արիշտա: 25.Նախորդ: 28.Այն: 29.Յեր: 30.Գինի: 31.Յարկ: 34.Անի: 35.Յմայիչ: 36.Բվեճ: 37.Զրաղաց: 38.Նյուտոն: 40.Աորտա: 41.Մեեգո: 43.Ղադի: 44.Ցավի: 46.Նազ: 49.Լի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445